ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՇՀԱՊՁԲ-9/12-5»

ք. Երևան «31» «05» 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «ԿՈՆՑԵՌՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Բ. Թադևոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ սույն պայմանագրով նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 83,226,740 (ութսուներեք միլիոն երկու հարյուր քսանվեց հազար յոթ հարյուր քառասուն) ՀՀ դրամ: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017թ. դեկտեմբերի 10-ը:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (*Հավելված N 4*) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (*Հավելված N 4.1*):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման

նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 N 4 և N 4.1 հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ԿՈՆՑԵՌՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ
ք. Երևան Բագրևանդի 5	Ք. Երևան, Արզումանյան 32-10
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 21700218255800 1
ՀՎՀՀ 00867[illegible]	ՀՎՀՀ 01219095[illegible]
ՀՀ պաշտպանության նախարարության	տնօրեն
ՆՏԱ դեպարտամենտի պետ՝ ՊԺԿ	
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 1
N ՇՀԱՊՁԲ-9/12-5 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	ԱՆՎԱՆՈՒՄ	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ
1	Հեպատիտ C 1X50	Նախատեսված LC Nano անալիզատորի համար; ֆորմատ՝ 50 թեստ; պահպանման ջերմաստիճանը՝ -20-ից -80°C; նախատեսված է in-vitro ախտորոշման համար (IVD); պարունակում է նուկլեինաթթուների ամպլիֆիկացիայի արդյունավետության գնահատման ներքին ստանդարտ
2	Հեպատիտ B 1X50	Նախատեսված LC Nano անալիզատորի համար; ֆորմատ՝ 50 թեստ; պահպանման ջերմաստիճանը՝ -20-ից -80°C; նախատեսված է in-vitro ախտորոշման համար (IVD); պարունակում է նուկլեինաթթուների ամպլիֆիկացիայի արդյունավետության գնահատման ներքին ստանդարտ
3	Տոքսոպլազմա գոնդի 1x25 (2 տուփ)	Նախատեսված LC Nano անալիզատորի համար; ֆորմատ՝ 1x25 թեստ (2տուփ); պահպանման ջերմաստիճանը՝ -20-ից -80°C; նախատեսված է in-vitro ախտորոշման համար (IVD); պարունակում է նուկլեինաթթուների ամպլիֆիկացիայի արդյունավետության գնահատման ներքին ստանդարտ
4	Պապիլոմա վիրուս HPV V16-18 1 x 25 (2 տուփ)	Նախատեսված LC Nano անալիզատորի համար; ֆորմատ՝ 1x25 թեստ (2տուփ); պահպանման ջերմաստիճանը՝ -20-ից -80°C; նախատեսված է in-vitro ախտորոշման համար (IVD); պարունակում է նուկլեինաթթուների ամպլիֆիկացիայի արդյունավետության գնահատման ներքին ստանդարտ
5	Էքստրակտ բուֆեր NucliSens easyMag-1 4X1L	NucliSens easyMag-1 էքստրակտ բուֆեր 4x1 լիտր, 2-30 աստիճան ջերմություն
6	Էքստրակտ բուֆեր NucliSens easyMag-2 4X1L	NucliSens easyMag-2 էքստրակտ բուֆեր 4x1 լիտր, 2-30 աստիճան ջերմություն
7	Էքստրակտ բուֆեր NucliSens easyMag-3 4X1L	NucliSens easyMag-3 էքստրակտ բուֆեր 4x1 լիտր, 2-8 աստիճան ջերմություն
8	Բուֆեր լիզիս NucliSens easyMag Lysis 4X1L	NucliSens easyMag-4լիզիս բուֆեր 4x1 լիտր, 15-25 աստիճան ջերմություն
9	Մագնետիկ սիլիկա NucliSens easyMag 384 test	NucliSens easyMag մագնետիկ սիլիկա 384 տեստ, 2-8 աստիճան ջերմություն
10	Միկրոտուբ 1.5ml պտուտակավոր կափարիչով 500/տուփ	միկրոփորձանոթ 1.5 մլ պտուտակավոր կափարիչ 500 հատ/ տուփ
11	NucliSens easyMag –ի միանգամյա ծախսանյութեր 384 տեստ	384 տեստի համար, 15-25 աստիճան ջերմություն
12	pocH-pack 65 XL ռեագենտ	65 տեստանոց D և L ռեագենտներ ու օգտագործված արյան և ռեագենտների տարա, 15-25 աստիճան ջերմություն
13	Ստրոմատոլայզեր STM-WH 3X500ml	3x500 մլ, 15-25 աստիճան ջերմություն
14	Ստրոմատոլայզեր FB 5L	5լ, 15-25 աստիճան ջերմություն
15	Ստրոմատոլայզեր - 4DL 5L	5լ, 15-25 աստիճան ջերմություն
16	Ստրոմատոլայզեր - 4DS 42ml	42մլ, 15-25 աստիճան ջերմություն
17	Սուլֆոլայզեր 500ml	500 մլ, 15-25 աստիճան ջերմություն
18	Ռետսերչ II 1L+12ml	1լ+12 մլ, 15-25 աստիճան ջերմություն
19	Cellclean լվացող հեղուկ	cellclean 50մլ, 15-25 աստիճան ջերմություն
20	Վակուումային պլաստիկ Փորձանոթներ ԷՆԱ համար 2մլ-ոց N100 (0.4մլ Na citricum)	2մլ / 0,4մլ Na citricum/, գամմա-ճառագայթներով ստերիլիզացիայի սերտիֆիկացում, KIMASED շտատիվի համար, N100 փաթեթավորումով տուփ,
21	Թերմալ թուղթ TP-1 50 roll	փաթեթ 50 roll, pocH100i -ի համար
22	Թերմալ թուղթ TP-2 50 roll	փաթեթ 50 roll, KX-21-ի համար
23	Որակի ստուգման հեղուկներ KX-21 և Poch-100i համար /նորմալ,ցածր, բարձր-12ական անոթ/	3x12/նորմալ,ցածր, բարձր-12ական անոթ/, 2-8 աստիճան ջերմություն
24	Cellpack 10 L ռեագենտ	10 լիտր, 15-25 աստիճան ջերմություն
25	Ստուգիչ հեղուկ XT 4000-ի E-check (XE) 4.5ml L 4.5 մլ	4.5 մլ, 2-8 աստիճան ջերմություն
26	Ստուգիչ հեղուկ XT 4000-ի E-check (XE) 4.5ml N 4.5 մլ	4.5 մլ, 2-8 աստիճան ջերմություն
27	Ստուգիչ հեղուկ XT 4000-ի E-check (XE) 4.5ml H 4.5 մլ	4.5 մլ, 2-8 աստիճան ջերմություն
	Փոփոխման ենթակա մասեր	

		Cobas b 121 Sistem անալիզատորի ռեագենտներ
28	pH միկրոէլեկտրոդ	Cobas b 121 անալիզատորի համար
29	pCO2 միկրոէլեկտրոդ	Cobas b 121 անալիզատորի համար
30	pO2 միկրոէլեկտրոդ	Cobas b 121 անալիզատորի համար
31	Ռեֆերենս էլեկտրոդ էլեկտրոդ	Cobas b 121 անալիզատորի համար
32	Na միկրո էլեկտրոդ	Cobas b 121 անալիզատորի համար
33	K միկրո էլեկտրոդ	Cobas b 121 անալիզատորի համար
34	Ca միկրոէլեկտրոդ	Cobas b 121 անալիզատորի համար
35	Cl միկրոէլեկտրոդ	Cobas b 121 անալիզատորի համար
36	Որակի ստուգման հեղուկներ Cobas b 121 -ի համար 3 մակարդակի	Cobas b 121 անալիզատորի համար, 2-8 աստիճան ջերմություն
37	C1 կալիբրատոր լուծույթ 1	Cobas b 121 անալիզատորի համար, 15-25 աստիճան ջերմություն
38	C2 կալիբրատոր լուծույթ 2	Cobas b 121 անալիզատորի համար, 15-25 աստիճան ջերմություն
39	C3 հեղուկիՓաթեթ 3	Cobas b 121 անալիզատորի համար, 15-25 աստիճան ջերմություն
40	Դեպրոտեինայզեր 125 մլ	125մլ, 15-25 աստիճան ջերմոցյուն
41	Լիցքային պորտ PORT OMNI C	Cobas b 121 անալիզատորի համար PORT OMNI C
42	Պոմպային խողովակ TUBE OMNI C	Cobas b 121 անալիզատորի համար TUBE OMNI C
43	Թուղթ տպիչի Cobas b 121 -ի համար N10	Cobas b 121 անալիզատորի համար N10 փաթեթավորումով տուփ, Cobas b 121 -ի
44	The needle sealing	cobas b 121 պահեստամաս
45	The MC tubing set	cobas b 121 պահեստամաս
46	Docking mechanism pack	cobas b 121 պահեստամաս
47	Խնամքի հավաք cobas b121	cobas b 121 պահեստամաս
	Շտապ թեստեր	
48	Պրոկալցիտոնինի որոշման շտապ թեստ PCT Brahms N25	PCT Brahms իմունոքրոմատոգրաֆիկ թեստեր պրոկալցիտոնինի կիսաքանակական շտապ որոշման համար N25
		Accu-chek գլյուկոմետրի ստրիպներ
49	Գլյուկոմետրի ստրիպներ Accu-chek Aktiv N50	Accu-chek Aktiv տիպի գլյուկոմետրերի համար N50, տուփ, Պահել չոր տեղ
		Կենսարանական հեղուկների ստերիլության Bact/Alert 3 D 120 և միկրոբիոլոգիական VITEK 2 Compact 60 անալիզատորների հավաքներ
50	VITEK 2 GN 20 քարտ	VITEK սարքի գրամ բացասական մանրէների տարբերակման քարտ 20 հատ, պահել + 2°C to + 8°C ջերմաստիճանում
51	VITEK 2 GP 20 քարտ	VITEK սարքի գրամ դրական մանրէների տարբերակման քարտ 20 հատ պահել + 2°C to + 8°C ջերմաստիճանում
52	VITEK 2 YST 20 քարտ	VITEK սարքի սնկերի տարբերակման քարտ 20 հատ պահել + 2°C to + 8°C ջերմաստիճանում
53	VITEK 2 NH 20 քարտ	VITEK սարքի նեյսերիա հեմոֆիլների տարբերակման քարտ 20 հատ պահել + 2°C to + 8°C ջերմաստիճանում
54	VITEK 2 AST 20 քարտ GN համար	VITEK սարքի գրամ բացասական մանրէների հակաբիոտիկազգայնության քարտ 20 հատ պահել + 2°C to + 8°C ջերմաստիճանում
55	VITEK 2 AST 20 քարտ GP համար	VITEK սարքի գրամ դրական մանրէների հակաբիոտիկազգայնության քարտ 20 հատ պահել + 2°C to + 8°C ջերմաստիճանում
56	VITEK 2 AST-YS 20 քարտ	VITEK սարքի հակասնկային զգայնության քարտ 20 հատ պահել + 2°C to + 8°C ջերմաստիճանում
57	BTA FN անաէրոբ միջավայր արյան ստերիլության որոշման100շիշ	Bact/Alert սարքով արյան մեջ անաէրոբ մանրէների հայտնաբերման միջավայր 100 շիշ, 40մլ միջավայրի պարունակությամբ
58	GENbox անաէրոբ գազային գեներատոր 10 հատ	Անաէրոբ գեներատոր 2.5 լ էքսիկատորի համար 10 հատ տուփում, պահել սենյակային ջերմաստիճանում
59	GENbox միկրոաէրոֆիլ գազային գեներատոր10 հատ	միկրոաէրոֆիլ գեներատոր 2.5 լ էքսիկատորի համար 10 հատ տուփում, պահել սենյակային ջերմաստիճանում
60	BTA FA աէրոբ միջավայր արյան ստերիլության որոշման 100 շիշ	Bact/Alert սարքով արյան մեջ աէրոբ մանրէների հայտնաբերման միջավայր 100 շիշ, պահել սենյակային ջերմաստիճանում

61	Օքսիդազ ռեագենտ(0.75 ml) 50 ամպուլ	Օքսիդազա ախտորոշիչ լուծույթ 0.75 մլ x50 ամպուլա պահել + 2°C to + 8°C ջերմաստիճանում
62	Միկոպլազմա IST 2 25 թեսթ	ՈՒրոգենիտալ քսուքներում միկոպլազմա ուրեոպլազմա հայտնաբերման, քանակական որոշման, 9 հակաբակտերիալ պրեպարատների նկատմամբ զգայնության հավաքածու պահել + 2°C to + 8°C ջերմաստիճանում
63	Սաբուրո քլորամֆենիկոլ ագար 500 g	սաբուրո ագար խլորամֆենիկոլով սնկերի աճեցման համար 500 գր պլաստիկ փաթեթավորում, պահել սենյակային ջերմաստիճանում
64	XLD ագար 500 g	XLD ագար ախտածին էնտերոբակտերիաների աճեցման համար 500 գր պլաստիկ փաթեթավորում, պահել սենյակային ջերմաստիճանում
65	Արյունային հինմային ագար 500 g	Արյունային ագարի հիմք 500 գր պլաստիկ փաթեթավորում, պահել սենյակային ջերմաստիճանում
66	Մանիտ աղային ագար 500 g	Մանիտ աղային ագար ստաֆիլոկոկերի աճեցման համար 500 գր պլաստիկ փաթեթավորում, պահել սենյակային ջերմաստիճանում
67	Vagitest (10 ագար/սլայդ)	Տրանսպորտային միջավայր ուրոգենիտալ քսուքներում գոնոկոկերի աճեցման համար 10 հատ սլայդ, պահել + 2°C to + 8°C ջերմաստիճանում
68	Աղային 0,45% լուծույթ 3x500ml տուփ	VITEK սարքի աշխատանքային աղային լուծույթ 0.45 % 3 x 500 մլ շիշ, պահել սենյակային ջերմաստիճանում
69	R1: L-cysteine 5g	5 գր
70	R3 : phosphate buffer M/15 20x15ml	20 x15 մլ
71	API հանքային յուղ 1x125 մլ	125 մլ
72	VITEK 2 ANC անաէրոբ մանրէների տարբերակման քարտ	20 քարտ/տուփ
73	Անաէրոբ գեներատորի ինդիկատորներ 50 երիզ	50 երիզ/տուփ
74	BTA Subculture units 100 units	100 հատ
75	sterile polypropylene container with label and screw cap 150 ml, N1	150 մլ ծավալով, պտուտակավոր կափարիչով
76	Բամբակյա SWABS 100 հատ	բամբակե տամպոն ստերիլ մանրէաբանական հետազոտման համար, 100 հատ, պահել սենյակային ջերմաստիճանում

Ծանոթություն՝ Ապրանքները պետք է մատակարարվեն ք. Աբովյան, ՀՀ ՊՆ 73014 զորամաս հասցեով: Մատակարարման ժամանակ մասնակիցը պետք է ներկայացնի արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP, EC կամ այլ/ և /կամ/ արտադրող պետության կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագրի պատճենը և մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի և/կամ/ ապրանքի որակի սերտիֆիկատ (Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր): Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:

ԳՆՈՐԴ

Հայաստանի Հանրապետության նախարարություն
պաշտպանության նախարարության
ՀՀ զինված ուժերի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ԿՈՆՅԵՌՆ-ԷԼԵԿՏՐՈՍԱՖ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 2
N ՇՀԱՊՁԲ-9/12-5 պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	Չ/Մ	Քանակ	Մեկ միավ. գին/դրամ/	Ընդհանուր գումար/դրամ/	Գնման ժամանակացույց		
						2017թ. II եռամսյակ	2017թ. III եռամսյակ	2017թ. IV եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 30.11.2017թ
1	Հեպատիտ C 1X50	հավաքածու	5	400,000	2,000,000		5	
2	Հեպատիտ B 1X50	հավաքածու	4	305,000	1,220,000		4	
3	Տոքսոպլազմա գոնդի 1x25 (2 տուփ)	հավաքածու	1	499,000	499,000		1	
4	Պապիլոմա վիրուս HPV V16-18 1 x 25 (2 տուփ)	հավաքածու	2	499,000	998,000	1	1	
5	Էքստրակտ բուֆեր NucliSens easyMag-1 4X1L	հավաքածու	2	480,180	960,360	1		1
6	Էքստրակտ բուֆեր NucliSens easyMag-2 4X1L	հավաքածու	2	220,000	440,000	1		1
7	Էքստրակտ բուֆեր NucliSens easyMag-3 4X1L	հավաքածու	2	260,000	520,000	1		1
8	Բուֆեր լիզիս NucliSens easyMag Lysis 4X1L	հավաքածու	2	630,940	1,261,880	1		1
9	Մագնետիկ սիլիկա NucliSens easyMag 384 test	հավաքածու	2	939,400	1,878,800	1		1
10	Միկրոտուբ 1.5ml պտուտակավոր կափարիչով 500/տուփ	հավաքածու	1	124,400	124,400	1		
11	NucliSens easyMag –ի միանգամյա ծախսանյութեր 384 տեստ	հավաքածու	2	1,018,700	2,037,400	1		1
12	pocH-pack 65 XL ռեագենտ	տուփ	354	46,500	16,461,000	177		177
13	Ստրոմատոլայզեր STM-WH 3X500ml	տուփ	15	105,000	1,575,000	8		7
14	Ստրոմատոլայզեր FB 5L	տուփ	10	60,000	600,000	5		5
15	Ստրոմատոլայզեր - 4DL 5L	տուփ	8	75,000	600,000	4		4
16	Ստրոմատոլայզեր - 4DS 42ml	տուփ	8	60,000	480,000	4		4
17	Սուլֆոլայզեր 500ml	տուփ	10	21,000	210,000	5		5
18	Ռետսերչ II 1L+12ml	տուփ	6	150,000	900,000	3		3
19	Cellclean լվացող հեղուկ	հավաքածու	80	36,000	2,880,000	40		40
20	Վակուումային պլաստիկ Փորձանոթներ ԷՆԱ համար 2մլ-ոց N100 (0.4մլ Na citricum)	հավաքածու	1,800	10,900	19,620,000	900		900
21	Թերմալ թուղթ TP-1 50 roll	հավաքածու	20	33,000	660,000	10		10
22	Թերմալ թուղթ TP-2 50 roll	հավաքածու	10	33,000	330,000	5		5
23	Որակի ստուգման հեղուկներ KX-21 և Poch-100i համար /նորմալ,ցածր, բարձր-12ական անոթ/	հավաքածու	6	350,000	2,100,000		3	3
24	Cellpack 10 L ռեագենտ	հավաքածու	121	15,000	1,815,000	61		60
25	Ստուգիչ հեղուկ XT 4000-ի E-check (XE) 4.5ml L 4.5 մլ	հավաքածու	1	52,000	52,000		1	
26	Ստուգիչ հեղուկ XT 4000-ի E-check (XE) 4.5ml N 4.5 մլ	հավաքածու	1	52,000	52,000		1	
27	Ստուգիչ հեղուկ XT 4000-ի E-check (XE) 4.5ml H 4.5 մլ	հավաքածու	1	52,000	52,000		1	
28	pH միկրոէլեկտրոդ	տուփ	2	119,000	238,000	1		1
29	pCO2 միկրոէլեկտրոդ	տուփ	2	293,000	586,000	1		1

30	pO2 միկրոէլեկտրոդ	տուփ	3	234,000	702,000	2		1
31	Ռեֆերենս էլեկտրոդ էլեկտրոդ	տուփ	2	142,000	284,000	1		1
32	Na միկրո էլեկտրոդ	տուփ	4	124,000	496,000	2		2
33	K միկրո էլեկտրոդ	տուփ	4	108,000	432,000	2		2
34	Ca միկրոէլեկտրոդ	տուփ	4	111,000	444,000	2		2
35	Cl միկրոէլեկտրոդ	տուփ	4	104,000	416,000	2		2
36	Որակի ստուգման հեղուկներ Cobas b 121 -ի համար 3 մակարդակի	տուփ	2	220,000	440,000	1		1
37	C1 կալիբրատոր լուծույթ 1	տուփ	17	53,000	901,000	9		8
38	C2 կալիբրատոր լուծույթ 2	տուփ	17	53,000	901,000	9		8
39	C3 հեղուկիՓաթեթ 3	տուփ	17	81,000	1,377,000	9		8
40	Դեպրոտեինայզեր 125 մլ	տուփ	8	14,000	112,000	4		4
41	Լիցքային պորտ PORT OMNI C	տուփ	1	28,000	28,000	1		
42	Պոմպային խողովակ TUBE OMNI C	տուփ	3	15,500	46,500	2		1
43	Թուղթ տպիչի Cobas b 121 -ի համար N10	տուփ	11	6,600	72,600	6		5
44	The needle sealing	տուփ	1	9,000	9,000	1		
45	The MC tubing set	տուփ	1	54,000	54,000	1		
46	Docking mechanism pack	տուփ	1	35,000	35,000	1		
47	Խնամքի հավաք cobas b121	տուփ	3	350,000	1,050,000	2		1
48	Պրոկալցիտոնինի որոշման շտապ թեստ PCT Brahms N25	տուփ	3	310,000	930,000	2		1
49	Գլյուկոմետրի ստրիպներ Accu-chek Aktiv N50	տուփ	300	4,500	1,350,000	150		150
50	VITEK 2 GN 20 քարտ	հավաքածու	20	90,000	1,800,000	7	7	6
51	VITEK 2 GP 20 քարտ	հավաքածու	20	90,000	1,800,000	7	7	6
52	VITEK 2 YST 20 քարտ	հավաքածու	2	100,000	200,000	1		1
53	VITEK 2 NH 20 քարտ	հավաքածու	1	95,000	95,000		1	
54	VITEK 2 AST 20 քարտ GN համար	հավաքածու	20	90,000	1,800,000	7	7	6
55	VITEK 2 AST 20 քարտ GP համար	հավաքածու	20	90,000	1,800,000	7	7	6
56	VITEK 2 AST-YS 20 քարտ	հավաքածու	2	100,000	200,000	1		1
57	BTA FN անաէրոբ միջավայր արյան ստերիլության որոշման100շիշ	հավաքածու	2	367,000	734,000	1		1
58	GENbox անաէրոբ գազային գեներատոր 10 հատ	հավաքածու	4	18,000	72,000	2		2
59	GENbox միկրոաէրոֆիլ գազային գեներատոր10 հատ	հավաքածու	4	19,000	76,000	2		2
60	BTA FA աէրոբ միջավայր արյան ստերիլության որոշման 100 շիշ	հավաքածու	2	367,000	734,000	1		1
61	Օքսիդազ ռեագենտ(0.75 ml) 50 ամպուլ	հավաքածու	1	90,000	90,000		1	
62	Միկոպլազմա IST 2 25 թեստ	հավաքածու	10	130,000	1,300,000	4	3	3
63	Սաբուրո քլորամֆենիկոլ ագար 500 g	հավաքածու	2	18,000	36,000	1	1	
64	XLD ագար 500 g	հավաքածու	2	33,660	67,320	1	1	
65	Արյունային հինմային ագար 500 g	հավաքածու	6	25,000	150,000	3	3	
66	Մանիտ աղային ագար 500 g	հավաքածու	7	14,540	101,780	4	3	
67	Vagitest (10 ագար/սլայդ)	հավաքածու	2	15,000	30,000		2	

68	Աղային 0,45% լուծույթ 3x500ml տուփ	հավաքածու	6	16,750	100,500	2	2	2
69	R1: L-cysteine 5g	հավաքածու	4	10,000	40,000	2		2
70	R3 : phosphate buffer M/15 20x15ml	հավաքածու	2	21,000	42,000	1		1
71	API հանքային յուղ 1x125 մլ	հավաքածու	5	4,000	20,000	2	2	1
72	VITEK 2 ANC անաէրոբ մանրէների տարբերակման քարտ	հավաքածու	1	120,000	120,000	1		
73	Անաէրոբ գեներատորի ինդիկատորներ 50 երիզ	հավաքածու	1	22,900	22,900	1		
74	BTA Subculture units 100 units	հավաքածու	1	90,000	90,000	1		
75	sterile polypropylene container with label and screw cap 150 ml, N1	հավաքածու	3,100	97	300,700	1,600		1,500
76	Բամբակյա SWABS 100 հատ	տուփ	31	5,600	173,600	16		15
	Ընդամենը				83,226,740			

Հավելված N 3
N ՇՀԱՊՁԲ-9/12-5 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV կոդ	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ., այդ թվում՝							
			Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.17թ
1	Հեպատիտ C 1X50	33691159/165/4/4	0	0	2,000,000	2,000,000	2,000,000	2,000,000	2,000,000	2,000,000
2	Հեպատիտ B 1X50	33691159/166/4/4	0	0	1,220,000	1,220,000	1,220,000	1,220,000	1,220,000	1,220,000
3	Տոքսոպլազմա գոնդի 1x25 (2 տուփ)	33691159/167/4/4	0	0	499,000	499,000	499,000	499,000	499,000	499,000
4	Պապիլոմա վիրուս HPV V16-18 1 x 25 (2 տուփ)	33691159/172/4/4	499,000	499,000	998,000	998,000	998,000	998,000	998,000	998,000
5	Էքստրակտ բուֆեր NucliSens easyMag-1 4X1L	33691162/109/4/4	480,180	480,180	480,180	480,180	480,180	960,360	960,360	960,360
6	Էքստրակտ բուֆեր NucliSens easyMag-2 4X1L	33691162/110/4/4	220,000	220,000	220,000	220,000	220,000	440,000	440,000	440,000
7	Էքստրակտ բուֆեր NucliSens easyMag-3 4X1L	33691162/111/4/4	260,000	260,000	260,000	260,000	260,000	520,000	520,000	520,000
8	Բուֆեր լիզիս NucliSens easyMag Lysis 4X1L	33691162/112/4/4	630,940	630,940	630,940	630,940	630,940	1,261,880	1,261,880	1,261,880
9	Մագնետիկ սիլիկա NucliSens easyMag 384 test	33691162/113/4/4	939,400	939,400	939,400	939,400	939,400	1,878,800	1,878,800	1,878,800
10	Միկրոտուբ 1.5ml պտուտակավոր կափարիչով 500/տուփ	38431700/5/4/4	124,400	124,400	124,400	124,400	124,400	124,400	124,400	124,400
11	NucliSens easyMag –ի միանգամյա ծախսանյութեր 384 տեստ	38431700/6/4/4	1,018,700	1,018,700	1,018,700	1,018,700	1,018,700	2,037,400	2,037,400	2,037,400
12	pocH-pack 65 XL ռեագենտ	33691162/114/4/5	8,230,500	8,230,500	8,230,500	8,230,500	8,230,500	16,461,000	16,461,000	16,461,000
13	Ստրոմատոլայզեր STM-WH 3X500ml	33691162/115/4/5	840,000	840,000	840,000	840,000	840,000	1,575,000	1,575,000	1,575,000
14	Ստրոմատոլայզեր FB 5L	33691162/116/4/5	300,000	300,000	300,000	300,000	300,000	600,000	600,000	600,000
15	Ստրոմատոլայզեր - 4DL 5L	33691162/117/4/5	300,000	300,000	300,000	300,000	300,000	600,000	600,000	600,000
16	Ստրոմատոլայզեր - 4DS 42ml	33691162/118/4/5	240,000	240,000	240,000	240,000	240,000	480,000	480,000	480,000
17	Սուլֆոլայզեր 500ml	33691162/119/4/5	105,000	105,000	105,000	105,000	105,000	210,000	210,000	210,000
18	Ռետսերչ II 1L+12ml	33691162/120/4/5	450,000	450,000	450,000	450,000	450,000	900,000	900,000	900,000
19	Cellclean լվացող հեղուկ	33691162/121/4/4	1,440,000	1,440,000	1,440,000	1,440,000	1,440,000	2,880,000	2,880,000	2,880,000
20	Վակումային պլաստիկ Փորձանոթներ ԷՆԱ	33191310/8/4/4	9,810,000	9,810,000	9,810,000	9,810,000	9,810,000	19,620,000	19,620,000	19,620,000

	համար 2մլ-ոց N100 (0.4մլ Na citricum)									
21	Թերմալ թուղթ TP-1 50 roll	33141211/56/4/4	330,000	330,000	330,000	330,000	330,000	660,000	660,000	660,000
22	Թերմալ թուղթ TP-2 50 roll	33141211/57/4/4	165,000	165,000	165,000	165,000	165,000	330,000	330,000	330,000
23	Որակի ստուգման հեղուկներ KX-21 և Poch-100i համար /նորմալ,ցածր, բարձր-12ական անոթ/	33691162/122/4/4	0	0	1,050,000	1,050,000	1,050,000	2,100,000	2,100,000	2,100,000
24	Cellpack 10 L ռեագենտ	33691162/124/4/4	915,000	915,000	915,000	915,000	915,000	1,815,000	1,815,000	1,815,000
25	Ստուգիչ հեղուկ XT 4000-ի E-check (XE) 4.5ml L 4.5 մլ	33691162/125/4/4	0	0	52,000	52,000	52,000	52,000	52,000	52,000
26	Ստուգիչ հեղուկ XT 4000-ի E-check (XE) 4.5ml N 4.5 մլ	33691162/126/4/4	0	0	52,000	52,000	52,000	52,000	52,000	52,000
27	Ստուգիչ հեղուկ XT 4000-ի E-check (XE) 4.5ml H 4.5 մլ	33691162/127/4/4	0	0	52,000	52,000	52,000	52,000	52,000	52,000
28	pH միկրոէլեկտրոդ	33141211/62/4/5	119,000	119,000	119,000	119,000	119,000	238,000	238,000	238,000
29	pCO2 միկրոէլեկտրոդ	33141211/63/4/5	293,000	293,000	293,000	293,000	293,000	586,000	586,000	586,000
30	pO2 միկրոէլեկտրոդ	33141211/64/4/5	468,000	468,000	468,000	468,000	468,000	702,000	702,000	702,000
31	Ռեֆերենս էլեկտրոդ էլեկտրոդ	33141211/65/4/5	142,000	142,000	142,000	142,000	142,000	284,000	284,000	284,000
32	Na միկրո էլեկտրոդ	33141211/66/4/5	248,000	248,000	248,000	248,000	248,000	496,000	496,000	496,000
33	K միկրո էլեկտրոդ	33141211/67/4/5	216,000	216,000	216,000	216,000	216,000	432,000	432,000	432,000
34	Ca միկրոէլեկտրոդ	33141211/68/4/5	222,000	222,000	222,000	222,000	222,000	444,000	444,000	444,000
35	Cl միկրոէլեկտրոդ	33141211/69/4/5	208,000	208,000	208,000	208,000	208,000	416,000	416,000	416,000
36	Որակի ստուգման հեղուկներ Cobas b 121 -ի համար 3 մակարդակի	33691162/128/4/5	220,000	220,000	220,000	220,000	220,000	440,000	440,000	440,000
37	C1 կալիբրատոր լուծույթ 1	33691162/129/4/5	477,000	477,000	477,000	477,000	477,000	901,000	901,000	901,000
38	C2 կալիբրատոր լուծույթ 2	33691162/130/4/5	477,000	477,000	477,000	477,000	477,000	901,000	901,000	901,000
39	C3 հեղուկիՓաթեթ 3	33691162/131/4/5	729,000	729,000	729,000	729,000	729,000	1,377,000	1,377,000	1,377,000
40	Դեպրոտեինայզեր 125 մլ	33691162/132/4/5	56,000	56,000	56,000	56,000	56,000	112,000	112,000	112,000
41	Լիցքային պորտ PORT OMNI C	33141211/70/4/5	28,000	28,000	28,000	28,000	28,000	28,000	28,000	28,000
42	Պոմպային խողովակ TUBE OMNI C	33141211/71/4/5	31,000	31,000	31,000	31,000	31,000	46,500	46,500	46,500
43	Թուղթ տպիչի Cobas b 121 -ի համար N10	33141211/72/4/5	39,600	39,600	39,600	39,600	39,600	72,600	72,600	72,600
44	The needle sealing	38431700/9/4/5	9,000	9,000	9,000	9,000	9,000	9,000	9,000	9,000
45	The MC tubing set	38431700/11/4/5	54,000	54,000	54,000	54,000	54,000	54,000	54,000	54,000
46	Docking mechanism pack	38431700/14/4/5	35,000	35,000	35,000	35,000	35,000	35,000	35,000	35,000
47	Խնամքի հավաք cobas b121	33141211/73/4/5	700,000	700,000	700,000	700,000	700,000	1,050,000	1,050,000	1,050,000
48	Պրոկալցիտոնինի որոշման շտապ թեստ PCT Brahms N25	33691159/176/4/5	620,000	620,000	620,000	620,000	620,000	930,000	930,000	930,000
49	Գլյուկոմետրի ստրիպներ Accu-chek Aktiv N50	33211120/4/4/5	675,000	675,000	675,000	675,000	675,000	1,350,000	1,350,000	1,350,000
50	VITEK 2 GN 20 քարտ	33691162/133/4/4	630,000	630,000	1,260,000	1,260,000	1,260,000	1,800,000	1,800,000	1,800,000
51	VITEK 2 GP 20 քարտ	33691162/134/4/4	630,000	630,000	1,260,000	1,260,000	1,260,000	1,800,000	1,800,000	1,800,000
52	VITEK 2 YST 20 քարտ	33691162/135/4/4	100,000	100,000	100,000	100,000	100,000	200,000	200,000	200,000
53	VITEK 2 NH 20 քարտ	33691162/136/4/4	0	0	95,000	95,000	95,000	95,000	95,000	95,000

54	VITEK 2 AST 20 քարտ GN համար	33691162/137/4/4	630,000	630,000	1,260,000	1,260,000	1,260,000	1,800,000	1,800,000	1,800,000
55	VITEK 2 AST 20 քարտ GP համար	33691162/138/4/4	630,000	630,000	1,260,000	1,260,000	1,260,000	1,800,000	1,800,000	1,800,000
56	VITEK 2 AST-YS 20 քարտ	33691162/139/4/4	100,000	100,000	100,000	100,000	100,000	200,000	200,000	200,000
57	BTA FN անաէրոբ միջավայր արյան ստերիլության որոշման100շիշ	33691166/1/4/4	367,000	367,000	367,000	367,000	367,000	734,000	734,000	734,000
58	GENbox անաէրոբ գազային գեներատոր 10 հատ	33691162/140/4/4	36,000	36,000	36,000	36,000	36,000	72,000	72,000	72,000
59	GENbox միկրոաէրոֆիլ գազային գեներատոր10 հատ	33691162/141/4/4	38,000	38,000	38,000	38,000	38,000	76,000	76,000	76,000
60	BTA FA աէրոբ միջավայր արյան ստերիլության որոշման 100 շիշ	33691166/4/4/4	367,000	367,000	367,000	367,000	367,000	734,000	734,000	734,000
61	Օքսիդազ ռեագենտ(0.75 ml) 50 ամպուլ	33691162/142/4/4	0	0	90,000	90,000	90,000	90,000	90,000	90,000
62	Միկոպլազմա IST 2 25 թեսթ	33691162/144/4/4	520,000	520,000	910,000	910,000	910,000	1,300,000	1,300,000	1,300,000
63	Սաբուրո քլորամֆենոլ ագար 500 g	33691166/5/4/4	18,000	18,000	36,000	36,000	36,000	36,000	36,000	36,000
64	XLD ագար 500 g	33691166/6/4/4	33,660	33,660	67,320	67,320	67,320	67,320	67,320	67,320
65	Արյունային հինմային ագար 500 g	33691166/7/4/4	75,000	75,000	150,000	150,000	150,000	150,000	150,000	150,000
66	Մանիտ աղային ագար 500 g	33691166/8/4/4	58,160	58,160	101,780	101,780	101,780	101,780	101,780	101,780
67	Vagitest (10 ագար/սլայդ)	33691166/9/4/4	0	0	30,000	30,000	30,000	30,000	30,000	30,000
68	Աղային 0,45% լուծույթ 3x500ml տուփ	33691162/145/4/4	33,500	33,500	67,000	67,000	67,000	100,500	100,500	100,500
69	R1: L-cysteine 5g	33691162/146/4/4	20,000	20,000	20,000	20,000	20,000	40,000	40,000	40,000
70	R3 : phosphate buffer M/15 20x15ml	33691162/147/4/4	21,000	21,000	21,000	21,000	21,000	42,000	42,000	42,000
71	API հանքային յուղ 1x125 մլ	33691162/148/4/4	8,000	8,000	16,000	16,000	16,000	20,000	20,000	20,000
72	VITEK 2 ANC անաէրոբ մանրէների տարբերակման քարտ	33141211/75/4/4	120,000	120,000	120,000	120,000	120,000	120,000	120,000	120,000
73	Անաէրոբ գեներատորի ինդիկատորներ 50 երիզ	33141211/76/4/4	22,900	22,900	22,900	22,900	22,900	22,900	22,900	22,900
74	BTA Subculture units 100 units	33141211/77/4/4	90,000	90,000	90,000	90,000	90,000	90,000	90,000	90,000
75	sterile polypropylene container with label and screw cap 150 ml, N1	33141211/79/4/4	155,200	155,200	155,200	155,200	155,200	300,700	300,700	300,700
76	Բամբակյա SWABS 100 հատ	33141211/80/4/5	89,600	89,600	89,600	89,600	89,600	173,600	173,600	173,600

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:

ԳՆՈՐԴ

«Արտաքին տնտեսական գործունեության ապահովագրության գործակալություն» ՊՈԱԳ

Հանրային ծառայությունների կարգավորիչ հանձնաժողովի գրասենյակի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ԿՈՆՑԵՌՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ

տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 4
N ՇՀԱՊՁԲ-9/12-5 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
N ՇՀԱՊՁԲ-9/12-5 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն